

Հայաստանի կենսաբ. հանդես, 2(65), 2013

## ՍՊԻՏԱԿ ԵՐԵՖՆՈՒԿԻ (TRIFOLIUM REPENS L.)

ՈՐՊԵՍ ՀԱԿԱՐԻՊՕՔՍԻԿ ԴԵՂԱԲՈՒՅՍԻ  
ԱՇԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԾՆՉԱՌՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ն.ՅՈՒ.ԱԴԱՄՅԱՆ, Մ.Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Ն.Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

Երևանի պետիամալսարան, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոն  
nona01011966@mail.ru

Ավանդական բժշկության մեջ շնչառական համակարգի հիվանդությունների ժամանակ որպես հակահիպօքսիկ բուժամիջոց կիրառվում է մարգագետնային սպիտակ երեխուկը: Այն համարվում է բնական հակաօքսիդիչ, որը ընդունակ է ճեղքացնելու ազատ ռադիկալների ակտիվությանը, որոնց ավելցուկային բանակն օրգանիզմին հրահրում է ախտաբանական զարգացումներ:

Այս հետազոտությունը թույլ է տվել պարզել, որ մարգագետնային սպիտակ երեխուկը հակահիպօքսիկ ազետեությունը է թողնում օրգանիզմի, համակարգային և քաշային մակարդակներում: Այն բարձրացնում է շնչառության կայունությունը՝ թթվածնային անբավարության պայմաններում, որն երկարավուն ուղեղի շնչառական կենտրոնի ներյունների ավելի բարձր դիմացնության արդյունք է:

Թթվածնաքաղց – շնչառություն – շնչառական կենտրոն – սպիտակ երեխուկ

При болезнях дыхательной системы (бронхиты, бронхиальная астма, простуда) народная медицина рекомендует множество лекарственных трав, обладающих антигипоксическими свойствами. К числу таких трав относится и клевер луговой (*Trifolium repens L.*). Результаты экспериментов дают основание полагать, что при кормлении животных луговым клевером повышение устойчивости организма происходит не только на системном (внешнее дыхание сохраняется дольше), но и на клеточном уровне, так как параллельно регистрируемая электрическая активность нейронов дыхательного центра продолговатого мозга проявляет высокую устойчивость по сравнению с контрольной группой.

Гипоксия – дыхательная система – дыхательный центр – клевер

The folk medicine recommends medicinal herbs with antihypoxic properties for the respiratory system diseases such as bronchitis, bronchial asthma, cold. One of these herbs is *Trifolium repens L.* Fam. Fabaceae. The experiment results suggest that the increase in organism stability occurs both at the system (external respiration remains longer) and cell levels since simultaneously registered electrical activity of the respiratory centre neurons of medulla has shown high stability as compared to screening group.

Hypoxia – respiratory system – respiratory centre – trifolium

Թթվածնաքաղցի հիմնախնդիրը ներկայումս մեծ տեղ է զբաղեցնում գործնական բժշկության բնագավառում, քանի որ այն ուղեկցում է մարդուն ամբողջ կյանքի ընթացքում այս կամ այն ձևով: Թթվածնաքաղցը հիփօքսիան դրսնորվում է լեռնային բարձրադիր պայմաններում, լեռնավացության և պարաչյուտային թռիչքների ժամանակ: Մարդկանց առողջության համար որոշակի վստագ են ներկայացնում ինչպես երկարատև, այնպես էլ կարճատև ինքնաթիռային թռիչքները:

Նման պայմաններում արյան մեջ իջնում է  $O_2$ -ի քանակը, որը եթե անվնաս է առողջ մարդկանց համար, ապա լուրջ վտանգ է ներկայացնում շնչառական կամ սիրտանոթային հիվանդություններ ունեցողների համար: Պարզվել է, որ եկոլոգիական ծայրահեղ գործոնների (թթվածնային անբավարարություն, վիբրացիա, աղմուկ և այլն) ազդեցության հետևանքով առաջացած մի շարք հիվանդությունների (ալերգիաներ, արիթմիա, շնչառության խանգարումներ) ախտաբանական զարգացումներում ևս կարևոր տեղ է գրավում հիպօքսիան [4,5,9]: Բոլոր դեպքերում այն զարգանում է միևնույն սինեմայով. Կա՞ քիշներում խանգարվում են օքսիդացման պրոցեսներ, հյուսվածքներում նվազում է  $O_2$ -ի քանակը, միտոքոնդրիումները քայլայվում են, խանգարվում են օքսիդացման և ֆուսֆորիլացման պրոցեսները, խախտվում է Նա-Կ-ական պոմպի գործունեությունը, խթանվում է ազատ ռադիկալների առաջացման պրոցեսը: Վերոհիշյալ փոփոխությունները դաշտադեղնում են էներգետիկ կապերի առաջացումը, իշեցնելով բջջի էներգետիկական ներուժը և ճնշելով կենսասինթեզի գործընթացները: Դա հատկապես ցայտում է դրսնորվում պյաստիկ նշանակության լոյուրերի սպիտակուցների և նրանց կոմպլեքսների, ինչպես նաև տարբեր դասի լիպիդների, այդ թվում նաև թթառաղանթների կառուցվածքի մեջ մտնող լոյուրերի սինթեզման ժամանակ: Այս երևույթների զարգացումները կանխելու համար թժկության մեջ կիրառվում են բնական և արհեստական հակաօքսիդիչ բուժամիջոցների դեղանյութեր, որոնք ունակ են կապելու ազատ ռադիկալները և կանխելու լիպիդների գերօքսիդացումը [1,2]: Սակայն թիվ են հետազոտությունները, որոնք կարող են բացահայտել ժողովրդական թժկության մեջ որպես հակաօքսիդիչ միջոց կիրառվող բույսերի ազդեցության մեջանիզմները: Այդ նպատակով մեր փորձերում ուսումնասիրվել է ավանդական թժկության մեջ շնչառական համակարգի տարբեր հիվանդությունների (բրոնխիտ, ասթմա, ինչպես նաև սակավարյունություն) ժամանակ օգտագործվող սպիտակ երեքնուկի ազդեցությունը շնչառության վրա թթվածնային անբավարարության պայմաններում:

**Մութ և մթթող:** Ուսումնասիրությունները կատարվել են սուր փորձի պայմաններում 180-230 գ քաշ ունեցող սպիտակ առնետների վրա, որոնք թմբեցվել են ջլորալոզի (40 մգ/կգ և նեմրութայի 10 մգ/կգ) խառնուրդով: Օգտագործել ենք կենդանիների երկու խումբ՝ ստուգիչ և փորձարարական: Փորձարարական խմբին կերի հետ 10 օր տրվել է սպիտակ երեխնուկի ընդ զանգված՝ 100 գ քաշին 5 մգ (որը համապատասխանում է ավանդական թժկության մեջ կիրառվող չափարանին): Ստրենտատաքսիկ սեղանիկի վրա ամրացված կենդանու շնչառական նեյրոնների ակտիվության արտածման նպատակով ուղղվելի մասնակի հեռացումից հետո ապակյա միկրոելեկտրոդը իշեցվել է երկարավուս ուղղելի օքե-ի շրջան: Նեյրոնների իմպուլսային ակտիվության արտաքչային արտածումը հրականացվել է 2M NaCl-ի լուծույթով լցված ապակյա միկրոէլեկտրոդով (ծայրի տրամագիծը՝ 1,5-2 մկմ, դիմադրությունը՝ 3 ՄՕմ): Նեյրոնների տարբերակման, ինչպես նաև ընդհանուր շնչառության գնահատման համար միաժամանակ գրանցվել է կենդանու արտաքին շնչառությունը:

Նեյրոնների ուսումնասիրվող ցուցանիշների գրանցումը կատարվել է մթնոլորտային մնշման բնականն պայմաններում (նորմօքսիա) և թթվածնաքաղի ազդեցության դիմամիկային: Թթվածնաքաղի մոդելը ստեղծվել է մնշաբացում: Օդի դուրս մնշման ճանապարհով մնշանցում առաջանում է տարբեր «քարձորությունների» համապատասխանող թթվածի պացիոհալ ճնշում, որը բերում է նաև արյան մեջ  $O_2$ -ի լարվածության փոփոխությունների: Նման փոփոխությունները նկատվում են նաև տարբեր հիվանդությունների ժամանակ օրգանիզմում առաջացող էնդոքսն հիպօքսիայի հետևանքով: Նեյրոնների եկեղեցական ակտիվության գրանցումը կատարվել է 4500-5000 մ ( $pO_2=109-85$  մմ սլդ.ս.) բարձրության վրա, որը համարվում է չափավոր թթվածնաքաղի փուլ, 7500-8000 մ ( $pO_2=64-53$  մմ սլդ.ս.) բարձրության վրա, որը համարվում է սուր թթվածնաքաղի փուլ, և եկանուային մակարդակին «իշեցնելուց» հետո: Ճնշանցիկում կենդանիների բարձրացումը ու իշեցումը կատարվել է 20-25 մ/վ արագությամբ:

Նեյրոնների եկեղեցական ակտիվության գրանցումը, վերլուծությունը և ստացված տվյալների վիճակագրական մշակումը կատարվել է համակարգչային համապատասխան ծրագրով:

**Արյունքներ և քննարկում:** Նորմօքսիայի պայմաններում կենդանիների ստուգիչ խմբում գրանցվել է 46 արտաշնչական (երսպիրատոր Նեյրոն (ԷՆ)) և 33 ներշնչական (ինսպիրատոր Նեյրոն (ԻՆ)): Յիպօքսիայի առաջին փուլում (4,5-5 հազ.մ) իրենց ակտիվությունը պահպանել են 36 (78,2%) ԷՆ և 26(74,2%) ԻՆ: Յիպօքսիայի ծանր փուլում  $pO_2$  խիստ անկումը հանգեցնում է ակտիվ շնչառական նեյրոնների քանակի կտրուկ նվազման (համապատասխանաբար 52,1% և 51,4%):

Կենդանիներին իշեցնելուց հետո նեյրոնների մոտ տեղի է ունեցել ելակետային տվյալների վերականգնում: Փորձերը ցոյց տվեցին, որ երեքնուկի ազդեցությամբ հիպօքսիայի և չափավոր և ծամր փուլում ավելի մեծ քանակով նեյրոններ են պահպանում իրենց ակտիվությունը: Այսպես՝ հիպօքսիայի առաջին փուլում ակտիվությունը պահպանել են 92,8% և 93,1 % և: Դիպօքսիայի ծամր փուլում այդ ցուցանիշները եղել են 71,4% և 70,4% համապատասխանաբար: Կենդանիներին իշեցնելուց հետո ստուգիչ տվյալների համեմատությամբ փորձարարական խմբի մոտ ավելի մեծ քանակով նեյրոններ են (95%) վերականգնել իրենց ակտիվությունը: Բացի քանակական փոփոխություններից ուսումնասիրվել են նաև շնչառական նեյրոնների համագարկի տևողությունը, համազարկում իմպուլսների քանակը և իմպուլսային ակտիվության միջին հաճախականությունը, որը ավելի հավաստի է դարձնում ստացված տվյալները: Վերոհիշյալ ցուցանիշների փոփոխության դինամիկան բերված է աղ. 1-ում:

**Աղ. 1.** Երկարավոր ուղեղի շնչառական կենտրոնի փուլային նեյրոնների իմպուլսային ակտիվության փոփոխությունը սպիտակ երեխովի ազդեցությամբ թթվածնաքաղցի պայմաններում

Ցուցանիշներ	Ստուգիչ տվյալներ				Ցուցանիշների փոփոխությունը երեքնուկի օգտագերճուից հետո			
	Նորմա	4,5-5 հազ.մ	7,5-8 հազ.մ	Իշեցում	Նորմա	4,5-5 հազ.մ	7,5-8 հազ.մ	Իշեցում
<b>Երսպիտատոր նեյրոններ</b>								
Համազարկի տևողությունը	0,56	0,54	0,57	0,55	0,58	0,59	0,61	0,59
Իմպուլսների թիվը համազարկում	15	19	10	17	25	31	21	24
Իմպուլսների միջին հաճախությունը	26,7	35,2	17,5	30,9	43,1	52,5	34,4	40,6
<b>Ինսպիրատոր նեյրոններ</b>								
Համազարկի տևողությունը	0,42	0,41	0,55	0,55	0,37	0,34	0,37	0,40
Իմպուլսների թիվը համազարկում	14	16	15	18	17	20	16	17
Իմպուլսների միջին հաճախությունը	33,3	39,2	27,2	32,7	45,9	58,8	43,2	42,5

Երկարավոր ուղեղի շնչառական կենտրոնի նեյրոնների գործունեության գումարային արդյունքը արտահայտվում է արտաքին շնչառության ցուցանիշներում: Թթվածնաքաղցի առաջին փուլում և ստուգիչ և փորձարարական խմբի կենդանիների մոտ նկատվում է շնչառության խորացում և հաճախականության մեծացում, որով օրգանիզմը փորձում է համարել թթվածնի պակասը: Թթվածնաքաղցի խորացմանը (բարձրության ավելացմանը) զուգընթաց այդ ցուցանիշները փոփոխվում են հակառակ ուղղությամբ (շնչառությունը դառնում է մակերեսային, հսկ հաճախականությունը նվազում է), որն էլ հիմնականում հանգեցնում է շնչառության դադարի: Ստուգիչ խմբի կենդանիները դիմանում են մինչև 6-6,5 հազ. մետր բարձրության, որտեղ 5 ր պահելուց հետո շնչառությունը կանգ էր առնում, և կենդանին կարող էր սատկել, իսկ փորձարարական խմբի կենդանիները, որոնք ստացել են երեխովի ծաղիկներ, դիմանում են մինչև 7,5-8 հազ. մ բարձրությանը, որը վկայում է այդ պայմաններում շնչառական ներուժի ավելի բարձր դիմացկունության մասին:

Օրգանիզմի որոշ ախտաբանական վիճակներում, ինչպես նաև թթվածնի ցածր պարունակությամբ միջավայրում տաքարյուն կենդանիների բջիջներում կարող է առաջանալ թթվածնի պահեստավորման անհրաժեշտություն: Դա հատկապես վերաբերվում է լյութափինականական մեծ ակտիվություն ունեցող լյարդային և մկանային բջիջներին, որոնք խիստ առանձնանում են թթվածնի յուրացման մեծ արագությամբ, ինչպես հաճախուի, այնպես էլ մեծ ծանրաբեռնվածությունների ժամանակ [3]:

Այդ պայմաններին օրգանիզմի կենսագործունեության ապահովման համար մշակված են մի շարք կանխարգելիչ և բուժիչ միջոցառումներ, որոնցից են կլիմայավարժեցումը, չափավոր հիպօքսիթերապիան, ինչպես նաև հակահիպօքսիկ բնական և արհեստական բուժամիջոցների կիրառումը, որոնք ուղղված են մեղմացնելու օրգանիզմի հյուսվածքներում թթվածնաքաղցի ախտաբանական զարգացումները [6, 7]: Ինչպես վերը նշվեց, այդ զարգացումներում, ի թիվս մի շարք գործընթացների, որոշակի դեր է խաղում ազատ ռադիկալների առաջացումը: Դա համարվում է նաև օրգանիզմի ծերացման կարևոր գործուներից մեկը:

Բջջաթաղանթների լիպիդների և արյան պլազմայի լիպոպրոտեինների կազմի մեջ մտսող չհագեցած ճարպաթթուների ազատ ռադիկալները մասնակցում են լիպիդների գերօքսիդացման ռեակցիաներում: Թունավորուների ժամանակ, քաղցկեղածին նյութերի և տարրեր սթրեսների առկայության, այդ թվում նաև թթվածնաքաղի պայմաններում նման ռեակցիաների չափազանց ակտիվացումը խախտում է բջջաթաղանթի պաշտպանիչ հատկությունը, խանգարելով բջջների կենսագործունեությունը, նպաստելով սրտի, լյարդի, ուղեղի և այլ օրգանների ֆունկցիայի խանգարմանը [3]:

Դայտնի է, որ սպիտակ երեխուկի ծաղիկները պարունակում են ֆլավոնիդներ, ռաբաղանյութեր, եթերայուղեր, Բ-խմբի վիտամիններ, կումարին, ալկալիդներ և գլիկոզիդներ, ճարպային յուղեր, խեժ: Բույսի տերևները պարունակում են սպիտակուցներ, ճարպային յուղեր, ածխաջրեր, թիորոգին ամինաթթու, A, C, E վիտամիններ, ինչով էլ պայմանավորված է շնչառական անբավարությունը թեթևացնելու նրա հատկությունը: Այս բույսի հակաօքսիդիչային հատկությամբ է պայմանավորված նաև դրա բուժիչ ազդեցությունը աթերոսկլերոզի, սրտային և երիկամային ծագման այսուցների ժամանակ [6,8]:

Գիտական որոշ հետազոտություններից պարզվել է, որ բջջաթաղանթները պարունակում են չհագեցած ճարպաթթուներ, որոնք անբարենպաստ ազդեցությունների պատճառով գերօքսիդացվում են [3]: Գերօքսիդները կուտակվելով հյուսվածքներում և բջջաթաղանթներում, միանալով շրի հետ վերածվում են օքսիդների, որոնք ել անշատում են ակտիվ O<sub>2</sub>: Վերջինս դառնում է նյութափոխանակության խանգարումների և թաղանթների վնասվածքների պատճառ: Գիտական տվյալների համաձայն վիտամին E-ն, որով հարուստ են երեխուկի տերևները, կապելով այդ O<sub>2</sub>-ը կասեցնում է լիպիդների օքսիդացումը հակազդելով գերօքսիդների թունավոր ազդեցությանը [6]:

Այսպիսով, հետազոտության տվյալները վկայում են այն մասին, որ սպիտակ երեխուկի ազդեցությամբ թթվածնաքաղի նկատմամբ օրգանականի դիմացկունության բարձրացումը համակարգային մակարդակով (արտաքին շնչառություն) պայմանավորված է բջջային մակարդակով նրա ազդեցությամբ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թորոսյան Ա.Ա. Դայաստակի դեղաբույսերը, Երևան, «Դայաստան», 1983, 200 էջ.
2. Ծառուլյան Թ.Գ., Գևորգյան Մ.Լ. Դայաստակի ուսումնական վայրի բույսերը, Երևան, «Լուսակն», 2007, 137 էջ.
3. Владимиров Ю.А., Арчаков А.И. Перекисное окисление липидов в биологических мембранах. М.: Наука, 1972. 142 с.
4. Законников К.Ф. Адаптация. Гипоксия. Здоровье. М., 1996, 95 с.
5. Никифоров В.Н. Ботулизм. Л., Медицина, 1985, 199 с.
6. Пшикова О.В. Действие β-каротина и витамина Е на ксигенотопографию и биоэлектрическую активность нервных клеток. Мат.-лы 209. конф., посвящ. 80-летию со дня рождения проф. Држевецкой И.А. “Физиологические проблемы адаптации”. Ставрополь, с. 24-25, 2003.
7. Темботова И.И. Действие биоантисоидантов облепихи крушиновидной на физиологические показатели сердечно-сосудистой системы человека. Канд.дисс. Нальчик, 21с., 2005.
8. Шаев М.Т., Пшикова О.В. Адаптационные изменения сердечно-сосудистой системы человека под влиянием природных антиоксидантов. Рос. физиол. журнал им. И.М. Сеченова, 90, 8, с. 11-17, 2004.
9. Smaldone M.C., Maranchie J.K. Clinical implications of hypoxia inducible factor in renal cell carcinoma. Urol. Oncol., 27, 3, p. 238-45, 2009.

Սուացել է 30.11.2012